«Անալիտիկ» ՓԲԸ 2016թ. բաժնետիրոջ տարեկան ընդհանուր ժողովի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընկերության 2016թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:
2. Ընկերության վերստուգողի եզրակացության ներկայացում:
3. Ընկերության 2016թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
4. Ընկերության 2016թ. տարեկան շահույթի /վնասի/ հաշվի հաստատում:
5. Ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Անալիտիկ» ՓԲԸ 2016թ. տարեկան
ընդհանուր ժողովի (Բաժնետիրոջ) որոշման

ք. Երևան **06.06.2017թ.**

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Ա. Մանուկյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար՝ ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող 100% ձայնի իրավունքով
Կ.Ղահրամանյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավար
Բ. Գյուլումյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Հ.Բուրմանյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
Ռ.Փիլոյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների բնական պաշարների նախարարության իրավաբանական վարչության դատահիրավական բաժնի պետ
Վ. Մարգարյան	ՀՀ և էներգետիկ ենթակառուցվածքների բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի բաժնի պետի պաշտոնակատար
Ս.Սարգսյան	«Անալիտիկ» ՓԲԸ գլխավոր տնօրեն, խորհրդակցական ձայնի իրավունքով

Ժողովի նախագահ՝ Ա.Մանուկյան
Քարտուղար՝ Ռ. Փիլոյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ընկերության 2016թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:
2. Ընկերության վերստուգողի /աուդիտի/ եզրակացության ներկայացում:
3. Ընկերության 2016թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
4. Ընկերության 2016թ. տարեկան շահույթի հաշվի հաստատում:
5. Ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

ՀԱՐՑ 1

Լսվեց ընկերության 2016թ. ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը /կցվում է/:

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՀԱՐՑ 2

Լսվեց ընկերության վերստուգողի /աուդիտի/ եզրակացությունը /կցվում է/:

Ներկայացնող-Վ.Մարգարյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ի գիտություն ընդունելով վերստուգողի /աուդիտի/ եզրակացությունը, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հաստատել «Անալիտիկ» ՓԲԸ 2016թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը:

ՀԱՐՑ 3

Լսվեց ընկերության 2016թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատման հարցը /կցվում է/:

Զեկուցող- Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հիմք ընդունելով ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ գլխավոր տնօրենի հաշվետվությունը և վերստուգողի /աուդիտի/ եզրակացությունը, հաստատել ընկերության 2016թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը:

ՀԱՐՑ 4

Լսվեց ընկերության 2016թ. շահույթի հաշվի հաստատման հարցը /տեղեկանքը կցվում է/:

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հաստատել ընկերության 2016թ. տարեկան զուտ շահույթը՝ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո 6681.0 հազ. ՀՀ դրամ և զուտ շահույթը՝ հաշվի առած ավելացումները /շահութաբաժնի հաշվարկի 060 տող/ 7242.0 հազ. ՀՀ դրամ:

ՀԱՐՑ 5

Լսվեց ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժնի վճարման չափի հաստատման հարցը /առաջարկությունը կցվում է/:

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հաստատել ընկերության 2016թ. տարեկան զուտ շահույթի բաշխումը հետևյալ համամասնությամբ.

ՀՀ կառավարության 03.03.2011թ. թիվ 202-Ն որոշման համաձայն, զուտ շահույթի /հաշվի առած ավելացումները/ 50 %-ը՝ 3621.0 հազ. դրամը փոխանցել պետբյուջե, որպես պետական մասնակության դիմաց շահութաբաժին.

զուտ շահույթի 5 %-ը՝ 334.0 հազ. դրամն ուղղել ընկերության պահուստային հիմնադրամ.

մնացած՝ 2726.0 դրամը /6681-3621-334/ թողնել/որպես/չբաշխված շահույթ:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ռ. ՓԻԼՈՅԱՆ**